

**Հեռախոսազանգերի գաղտնիության  
իրավունքի սահմանափակումը**

**Ղանբարյան Ա.**

**ՀՀ գլխավոր դատախազության գիտաուսումնական  
կենտրոնի գիտաշխատող**

Քրեական դատավարության համասոցիալական և անմիջական խնդիրների արդյունավետ իրականացումը պայմանավորված է քրեական դատավարությունում մասնավոր և հանրային շահերի ճիշտ զուգակցմամբ: Այսպես, հաճախ հանցագործության բացահայտման, մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը պայմանավորված է մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ: Օրինակ, հեռախոսային խոսակցության գաղտնիության սահմանափակումը հաճախ հանդիսանում է հանցագործության բացահայտման կարևորագույն գործիք: Միևնույն ժամանակ, հեռախոսային խոսակցության գաղտնիությունը հանդիսանում է մարդու սահմանադրական իրավունք:

ՀՀ Սահմանադրության 23 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի համաձայն՝ վերջնական օգտագործողներն ունեն էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիության իրավունք, իսկ նույն օրենքի 54 հոդվածի համաձայն՝ օպերատորները<sup>1</sup> և ծառայություններ մատուցողները պարտավոր են երաշխավորել հաճախորդների տեղեկությունների և հաղորդագրությունների գաղտնիությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ քր. դատ. օր.-ի 14-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Քրեական դատավարության ընթացքում արգելվում է անձին նշված իրավունքներից ապօրինի զրկելը կամ այդ իրավունքները սահմանափակելը: Քրեական դատավարության ընթացքում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կարող են իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն հոդվածում խնդիր ունենք անդրադառնալ այն հարցադրմանը, թե **հեռախոսային խոսակցության գաղտնիության սահմանափակման նկատմամբ նախնական դատական վերահսկողության վերաբերյալ սահմանադրական և քրեադատավարական նորմ-սկզբունքների պահանջները վերաբերում են միայն հեռախոսային խոսակցությունների բովանդակությունը լսելուն, թե՞ նաև հեռախոսազանգերի վերծանումներին<sup>2</sup>,**

Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեռախոսազանգերի վերծանումները դատարանի որոշմամբ տրամադրելու հարցի վերաբերյալ իրավապահ մարմինների աշխատակիցները և կապի օպերատորները ունեն հակասական մոտեցումներ: Այսպես, իրավապահ մարմինների առանձին աշխատակիցներ կարծում են, որ հեռախոսազանգերի վերծանումներ ստանալու համար դատարանի որոշում չի պահանջվում և կապի մարմինները պարտավոր են բավարարել հեռախոսազանգերի վերծանումներ տրամադրելու վերաբերյալ իրենց պահանջը: Վերջիններս իրենց մոտեցումը հիմնավորում են այն հանգամանքով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 14-րդ հոդվածում նշվում է, որ քրեական դատավարության ընթացքում միայն դատարանի որոշմամբ կարող է իրականացվել հեռախոսային խոսակցությունները լսելը, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 241 հոդվածում օգտագործվում է «*խոսակցությունների լսում և*

<sup>1</sup> «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օպերատորը ցանկացած անձ է, որը Կարգավորողի կողմից լիազորված է տիրապետել և շահագործել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցը՝ էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու նպատակով: Իր ցանցով ծառայություններ մատուցելու դեպքում օպերատորը համարվում է ծառայություններ մատուցող:

<sup>2</sup> Հեռախոսազանգերի վերծանում ասելով հասկանում ենք՝ մուտք և ելք եղած կանչերի, բաժանորդների հեռախոսահամարների, խոսակցության տևողության մասին տեղեկությունները, բայց ոչ բուն հեռախոսային խոսակցության բովանդակությունը:

ձայնագրառում» հասկացությունները, որոնք ենթադրում են դատարանի որոշմամբ հեռախոսային խոսակցության բովանդակության վերահսկելը, մինչդեռ, հեռախոսազանգերի վերծանումները բացահայտելը բնավ հեռախոսային խոսակցություն լսել չէ, հետևաբար՝ հեռախոսազանգերի վերծանումներ ստանալու համար դատարանի որոշում անհրաժեշտ չէ: Մյուս կողմից՝ կապի օպերատորները մերժում են իրավապահ մարմինների՝ վերծանումներ տրամադրելու մասին պահանջները, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ Սահմանադրությունը մուտք և ելք եղած հեռախոսազանգերի վերաբերյալ տվյալների տրամադրման համար անհրաժեշտ է համարում դատարանի որոշումը:

Հեռախոսազանգերի վերծանումները դատարանի որոշմամբ տրամադրելու խնդիրը ծագել է նաև այլ պետությունների իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, ՌԴ գլխավոր դատախազությունը սույն հարցի վերաբերյալ արտահայտել է հակասական դիրքորոշումներ: ՌԴ գլխավոր դատախազության 1999թ. մարտի 19 թիվ 36-609/166-99 նամակում նշված է եղել, որ մուտք և ելք եղած հեռախոսազանգերի, բաժանորդների համարների, հեռախոսային խոսակցությունների տևողության մասին տեղեկություններ ստանալը պետք է դիտել օպերատիվ պարզաբանում /наведение справок/, որի համար դատարանի որոշում չի պահանջվում: ՌԴ գլխավոր դատախազությունը հետագայում փոխել է իր դիրքորոշումը նշված հարցի վերաբերյալ. 2001թ. դեկտեմբերի 19-ի թիվ 16/3-р - 01 նամակում նշվել է. առանց դատարանի որոշմամբ մուտք և ելք եղած հեռախոսազանգերի մասին տեղեկություններ պահանջելը համարվում է ոչ իրավաչափ<sup>3</sup>:

ՀՀ-ում կապի օպերատորների և քրեական հետապնդման մարմինների դիրքորոշումների իրավաչափության գնահատման հարցում հստակություն չմտցրեցին նաև «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Նշված օրենքի 49 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր օպերատոր և ծառայություններ մատուցող պարտավոր է իր հաճախորդների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Օպերատորը կամ ծառայություններ մատուցողը իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները՝

1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ քրեական հանցագործության կամ ազգային անվտանգության նկատմամբ որևէ սպառնալիքի հետախուզման, հետաքննման կամ քրեական հետապնդման առնչությամբ<sup>4</sup>.

2) հաճախորդի գրավոր համաձայնության հիման վրա.

3) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն օպերատորի կամ ծառայություններ մատուցողի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ օպերատորի կամ ծառայություններ մատուցողի): Հաճախորդը կարող է պահանջել, որպեսզի բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով:

Փաստորեն, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը հանցագործության քննության առնչությամբ էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցում հղում է կատարում այլ օրենքի վրա:

Հեռախոսազանգերի վերծանումները դատարանի որոշմամբ տրամադրելու հարցին պատասխանելիս, նախ և առաջ պետք է պարզել, թե արդյոք հեռախոսազանգերի մասին տեղեկությունները կազմում են հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքի բաղկացուցիչ մաս, թե՞ ոչ: Առաջարկում ենք նշված հարցադրումը քննարկել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի և սահմանադրական իրավունքի հարթություններում:

<sup>3</sup> Чечетин А. Ограничение тайны связи. Законность. 2005, № 7, С. 38.

<sup>4</sup> «Էլեկտրոնային հաղորդակցության» մասին ՀՀ օրենքում առկա «քրեական հանցագործության կամ ազգային անվտանգության նկատմամբ որևէ սպառնալիքի հետախուզման, հետաքննման կամ քրեական հետապնդման առնչությամբ» նախադասությունը քրեադատավարական իմաստով ձևակերպված է ոչ չզգրիտ: Կարծում ենք, հանցագործությունը կամ սպառնալիքը չի կարելի հետախուզվել. հետախուզվում է մեղադրյալը: ՀՀ քր. դատ. օր.-ի 259 հոդվածի համաձայն՝ մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությամբ հանձնելն է: Անհասկանալի է նաև, թե ինչու է օրենքում հատուկ առանձնացվել հետաքննությունը, իսկ նախաքննության մասին չի նշվել:

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Եվրոպական դատարանը սկզբնական շրջանում «նամակագրություն» հասկացությունը մեկնաբանում էր տառացի՝ հաղորդագրությունների ուղարկում նամակի տեսքով<sup>5</sup>: Կլասն և այլոք ընդդեմ Գերմանիայի Դաշնային Զանրապետության գործով Եվրոպական դատարանը տվեց «նամակագրություն» հասկացության լայն մեկնաբանություն, նշելով. «Թեև հեռախոսային խոսակցությունները ուղղակիորեն նշված չեն 8-րդ հոդվածի 1-ին մասում, դատարանը գտնում է ... , որ այդպիսի խոսակցությունները հանդիսանում են «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մաս<sup>6</sup>: Զետագայում Եվրոպական դատարանը իր որոշումներում ավելի ընդլայնեց «նամակագրություն» հասկացության մեկնաբանությունը: Մելուոնն ընդդեմ Միացյալ Թագավորությունների գործով դիմողը պնդում էր, որ խախտվել է նամակագրության հարգման իրավունքը, քանի որ իր հեռախոսը դրված է եղել «հաշվիչի վրա», որը պետական մարմիններին հնարավորություն է տալիս ամրագրել, թե բաժանորդը ում հետ, և ինչքան ժամանակ է խոսում: Այս գործով Եվրոպական դատարանը ընդունեց դիմողի մոտեցումը և «խրոնոմետրաժի» պրակտիկան ընդգրկեց Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում օգտագործվող «նամակագրություն» հասկացության մեջ<sup>7</sup>:

Այսպիսով, Եվրոպական դատարանը հեռախոսագանգերի մասին տեղեկությունները դիտել է որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող տեղեկություն:

Սույն հարցն հանդիսացել է նաև ՌԴ Սահմանադրական դատարանի քննարկման առարկա: «1995թ. փետրվարի 16 — ի «Կապի մասին» ՌԴ օրենքի 32 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ Սովետական շրջանի Լիպեցկ քաղաքի դատարանի հարցումը քննության ընդունելուց հրաժարվելու մասին» ՌԴ Սահմանադրական դատարանի 2003թ. հոկտեմբերի 2-ին N 345 որոշման մեջ նշվում է.

*«ՌԴ Սահմանադրությունը նախատեսելով, որ հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքի սահմանափակում թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ /հոդված 23, մաս 2/, և արգելք սահմանելով առանց անձի համաձայնության նրա մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, պահելու, օգտագործելու և տարածելու նկատմամբ /հոդված 24, մաս 1/ ելնում է անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից:*

*Այսպիսով, Սահմանադրությունը դատական վերահսկողությունը դասում է այն երաշխիքների թվին, որոնք խոչընդոտում են մարդու և քաղաքացու հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքի անհիմն սահմանափակումը: Յուրաքանչյուրի հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքը իր սահմանադրաիրավական իմաստով, ենթադրում է հեռախոսային կապուղիներով ստացվող տեղեկությունների պաշտպանության գործողությունների համալիր, անկախ տեղեկությունների ստացման ժամանակից, լրիվության աստիճանից և բովանդակությունից, որոնք ամրագրվում են դրանց իրականացման տարբեր փուլերում: Ուստի ՌԴ Սահմանադրությամբ և ՌԴ տարածքում գործող այլ օրենքներով պաշտպանվող հեռախոսային խոսակցության գաղտնիք կազմող տեղեկություններ համարվում են հեռախոսային սարքավորումների օգնությամբ փոխանցվող, պահպանվող և պարզվող ցանկացած տվյալ, այդ թվում՝ կապի կոնկրետ օգտագործողների հեռախոսային սարքերի մուտքի և ելքի ազդանշանների միացումների վերաբերյալ տվյալները: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները նշված տվյալներ ձեռք բերելու համար պետք է ստանան դատարանի որոշում»:*

Տեսության մեջ նշվում է, որ Սահմանադրական դատարանը, տալով հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքի տարածական մեկնաբանություն, խախտում է պետության և անձի շահերի հավասարակշռվածությունը դեպի անձի կողմը, ինչն, առկա հանցավոր իրավիճակում, արդարացված չէ<sup>8</sup>: Կարծում ենք, մուտք և ելք եղած

<sup>5</sup> Eur. Court H.R. Golder v. United Kingdom, Judgement of 21 Feb. 1975, Series A, No.18; para.43.

<sup>6</sup> Eur. Court H.R. Klass and others v. Germany, Judgement of 6 Sept. 1978, Series A, No.269; para.41.

<sup>7</sup> Eur. Court H.R. Malone v. United Kingdom, Judgement of 2 Aug. 1986, Series A, No.82, para.84.

<sup>8</sup> Четин А. Ограничение тайны связи. Законность. 2005, № 7, С. 38.

հեռախոսազանգերի մասին տեղեկությունները հանդիսանում են հեռախոսային խոսակցության գաղտնիք, ուստի նման տվյալների ձեռք բերումը պետք է գտնվի նախնական դատական վերահսկողության ներքո: Ինչ վերաբերում է պետության և անձի շահերի հավասարակշռության խախտմանը, ապա կարծում ենք մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման նկատմամբ դատական վերահսկողության նախատեսումը հենց հանրային և մասնավոր շահերի զուգակցման լավագույն տարբերակն է:

Հեռախոսազանգերի վերծանումները դատարանի որոշմամբ տրամադրելու օգտին է վկայում ՀՀ քր. դատ. օր.-ի 279 հոդվածը, որի համաձայն՝ դատարանի որոշմամբ կատարվում են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանափակման հետ կապված քննչական գործողությունները: Այս նորմում նշվում է հեռախոսային խոսակցության գաղտնիության սահմանափակման մասին, իսկ ինչպես նշվեց, հեռախոսային խոսակցության գաղտնիքը իր սահմանադրաիրավական իմաստով ընդգրկում է նաև հեռախոսազանգերի վերծանումները:

Միևնույն ժամանակ, հեռախոսային խոսակցության գաղտնիքը չպետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի հեռախոսային սարքավորումների հետ առնչվող բոլոր տեղեկությունները: Օրինակ՝ կարծում ենք հեռախոսային խոսակցության գաղտնիք չի հանդիսանում բջջային հեռախոսի գտնվելու վայրի մասին կապի մարմիններից պահանջվող տեղեկությունը: Իդեպ, ՌԴ կառավարությունը 2005թ. օգոստոսի 27-ին N 538 որոշմամբ հաստատել է «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող լիազորված պետական մարմինների և կապի օպերատորների փոխգործունեության կանոնները»: Նշված կանոնների 12 կետի համաձայն՝ կապի օպերատորները հիմնում են բաժանորդների և նրանց մատուցած ծառայության մասին տվյալների շտեմարան: Տվյալների շտեմարանը պարունակում է 1. կապի օպերատորի բաժանորդների մասին հետևյալ տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը, հիմնական փաստաթղթի ռեկվիզիտները, իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, ինչպես նաև իրավաբանական անձանց վերջնամասային սարքավորումները օգտագործող անձանց ցուցակը, որտեղ նշվում են նրանց անունը, ազգանունը, հայրանունը և հիմնական փաստաթղթերի ռեկվիզիտները, 2. մատուցված կապի ծառայության համար հաշվարկները, այդ թվում՝ միացումները, տրաֆիկները և բաժանորդների վճարները: Կապի օպերատորները պարտավոր են նշված տվյալները պահել երեք տարի և տրամադրել Դաշնային անվտանգության ծառայության մարմիններին:

Կապի օպերատորի տիրապետության տակ գտնվող այն տեղեկությունները, որոնք չեն կազմում հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքի տարր /բաժանորդի հեռախոսի գտնվելու վայրի մասին տեղեկություններ, մատուցված ծառայությունների համար բաժանորդի կատարած վճարները/ վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ձեռք բերվեն ՀՀ քր. դատ. օր.-ի 172 հոդվածով սահմանված կարգով: Բանն այն է, որ թեև նշված տեղեկությունները չեն հանդիսանում հեռախոսային խոսակցության գաղտնիք, սակայն կարող են գնահատվել որպես էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիք. «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի համաձայն՝ վերջնական օգտագործողներն ունեն էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիության իրավունք, իսկ նույն օրենքի 49 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր օպերատոր և ծառայություններ մատուցող պարտավոր է իր հաճախորդների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի: Փաստորեն էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիությունը օրենքով պաշտպանվող գաղտնիք է, հետևաբար՝ նրանց վրա տարածվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 172 հոդվածով սահմանված իրավական ռեժիմը:

2.Եթե հեռախոսազանգերի վերծանումների վերաբերյալ տվյալները կազմում են Սահմանադրությամբ պաշտպանվող հեռախոսային խոսակցության գաղտնիք, ապա հարց է առաջանում, իրավապահ մարմինները այդ տեղեկությունները ստանալու համար ինչպիսի գործողությունների միջնորդությամբ պետք է դիմեն դատարան:

Հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը կարող է սահմանափակվել հետևյալ գործողությունների միջոցով՝

1. հեռախոսային խոսակցությունները լսելը՝ որպես քննչական գործողություն /ՀՀ քր. դատ. օր.-ի 241 հոդված/,
2. հեռախոսային խոսակցություններ լսելը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում/ՀՀ քր. դատ. օր.-ի 284 հոդված/,
3. հեռախոսազանգերի վերածանումները քննիչի կողմից պահանջելը /ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ/,
4. օպերատիվ պարզաբանումը /«Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի<sup>9</sup> 13 հոդվածի 1-ին մաս/:

ՀՀ քր. դատ. օր.-ի 241 հոդվածը որպես ինքնուրույն քննչական գործողություն նախատեսում է հեռախոսային խոսակցությունները լսելը, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 284 հոդվածը անձանց հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկատմամբ դատական վերահսկողությունը: ՀՀ քր. դատ. օր.-ի նշված դրույթներով նախատեսված քննչական և օպերատիվ-հետախուզական գործողություններ և միջոցառումներ կատարելու վերաբերյալ դատարանին ուղղված միջնորդության դեպքում, դատարանը իրավապահ մարմիններին թույլատրում է ստանալ ոչ միայն հեռախոսազանգերի վերածանումները, այլ նաև հեռախոսային խոսակցության բովանդակության ձայնագրառումը: ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ քննիչը, մասնավորապես, լիազորված է պահանջել փաստաթղթեր և նյութեր, որոնք կարող են տեղեկություններ պարունակել դեպքի և դրան առնչվող անձանց մասին: «Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի 16 հոդվածի համաձայն՝ օպերատիվ պարզաբանումը օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների իրականացման նպատակով, օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց և փաստերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումն է:

Այսպիսով, վերը նշված առաջին երկու գործողությունների /հեռախոսային խոսակցությունը լսելը/ ընտրության դեպքում վերահսկվում է մուտք և ելք եղած հեռախոսազանգերի մասին տվյալները, հեռախոսային խոսակցության բովանդակությունը, իսկ երրորդ և չորրորդ գործողությունների դեպքում սահմանափակվում է միայն մուտք և ելք եղած հեռախոսազանգերի գաղտնիության իրավունքը: Ուստի նշված գործողությունները մարդու հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքը սահմանափակում են տարբեր ծավալներով: Հեռախոսային խոսակցության բովանդակությունը լսելու դեպքում մարդու անձնական կյանքի գաղտնիության /լայն իմաստով/ իրավունքը սահմանափակվում է առավել, քան հեռախոսազանգերի վերծանումները բացահայտելու դեպքում:

Եթե վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ է ոչ թե հեռախոսային խոսակցության բովանդակության ձայնագրառումները, այլ միայն հեռախոսազանգերի վերծանումները, ապա հարց է առաջանում արդյոք այս դեպքում իրավապահ մարմինները պետք է միջնորդեն դատարանին թույլատրել սահմանափակելու հեռախոսային խոսակցության գաղտնիության առարկան կազմող ողջ տվյալները, թե՛ միայն հեռախոսազանգերի վերծանումների մասին տվյալները:

Խնդիրն այն է, որ հեռախոսազանգերի վերծանումների տրամադրման նկատմամբ դատական վերահսկողության տարածման հետևանքով չպետք է ձևավորվի այնպիսի իրավակիրառ պրակտիկա, երբ վարույթն իրականացնող մարմինն գործի քննության տեսանկյունից բավարար է միայն հեռախոսազանգերի վերծանումը, սակայն նա միաժամանակ պահանջի հեռախոսային խոսակցության այլ տվյալների սահմանափակում. չէ՛ որ և հեռախոսազանգերի վերծանումների, և հեռախոսային խոսակցության բովանդակությունը լսելու համար պահանջվում է դատարանի թույլտվություն:

Նման իրավակիրառ պրակտիկայի ձևավորումը կանխելու նպատակով առաջարկում ենք դատարաններին հեռախոսային խոսակցությունների գաղտնիքը բացահայտելու վերաբերյալ դատարանի միջնորդությունը քննելիս, առաջին հերթին պարզել,

<sup>9</sup> Նախագիծ Կ-746-28.11.2005-ՊԱ-010/0

արդյոք առաջադրված խնդիրները հնարավոր չէ լուծել միայն հեռախոսազանգերի վերծանումները բացահայտելով:

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինը դատարանից ստանում է կոնկրետ անձի հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու իրավունք, սակայն հետագայում դատական այդ որոշումը օգտագործվում է նույն գործով անցնող այլ անձանց հեռախոսազանգերի վերծանումները կապի մարմիններից պահանջելու համար: Կարծում ենք, վարույթն իրականացնող մարմինը դատարան է դիմում ստանալու ոչ թե տվյալ քրեական գործով անցնող անորոշ թվով անձանց հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու թույլտվություն, այլ կոնկրետ անձի հեռախոսազանգերի վերծանումները ձեռքբերելու թույլտվություն: Ուստի մի անձի հեռախոսազանգերի վերծանումները ստանալու դատարանի թույլտվությունը չի կարող տարածվել այլ անձանց հեռախոսազանգերի վերծանումները ստանալու նկատմամբ:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք դատարանները իրավասու են քննարկելու հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի միջնորդությունը, եթե դա կապված չէ հեռախոսային խոսակցության բովանդակության վերահսկման հետ /ՀՀ քր. դատ. օր.-ի 241 և 284 հոդվածներ/: Բանն այն է, որ իրավակիրառ պրակտիկայում հաճախ կարելի է հանդիպել այն մոտեցմանը, որ ՀՀ քր. դատ. օր.-ում հստակ կարգավորված է միայն հեռախոսային խոսակցությունների բովանդակությունը լսելու վերաբերյալ դատարանին ուղղված միջնորդության քննարկման կարգը, մինչդեռ հեռախոսազանգերի վերծանումներ պահանջելու թույլտվություն ստանալու միջնորդությամբ դատարան դիմելու դեպք և նման միջնորդության քննարկման կարգ ՀՀ քր. դատ. օր.-ը չի նախատեսում: ՀՀ քր. դատ. օր.-ի 241 հոդվածում օգտագործվում են այնպիսի հասկացություններ, որոնք հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքը կապում են զուտ հեռախոսային խոսակցության բովանդակության հետ: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 241 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց, հեռախոսային կամ կապի այլ միջոցներով *տարվող խոսակցություններում* /ընդգծումն-Ղ.Ա./ կարող են գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել, դատարանի որոշմամբ թույլատրվում է տվյալ խոսակցությունների լսում և ձայնագրառում: *խոսակցությունների լսման և ձայնագրառման* /ընդգծումն-Ղ.Ա./ անհրաժեշտության մասին քննիչը կայացնում է՝ դատարանին միջնորդություն հարուցելու մասին պատճառաբանված որոշում, որում նշվում են՝ քրեական գործը եւ հիմքերը, որոնցով պետք է կատարվի համապատասխան քննչական գործողությունը, այն անձանց ազգանունը, անունը, որոնց խոսակցությունները ենթակա են լսման, լսման ժամկետը, հիմնարկը, որին հանձնարարվում է խոսակցությունների լսման եւ ձայնագրառման տեխնիկական իրականացումը: Որոշումը ուղարկվում է դատարան: *խոսակցությունների լսման և ձայնագրառման* /ընդգծումն-Ղ.Ա./ համար դատավորի համաձայնության դեպքում որոշումը կատարման համար քննիչի կողմից ուղարկվում է համապատասխան հիմնարկ: Մեջբերված նորմերում ուղղակիորեն նշվում է, խոսակցությունների լսման և ձայնագրառման համար դատարանի համաձայնության մասին: Իդեպ, ՀՀ դատական պրակտիկայում եղել են դեպքեր, երբ դատարանները հրաժարվել են դատավարական գործողություններ կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունները քննել, այն պատճառաբանությամբ, որ այդ հարցը ՀՀ քր. դատ. օր.-ով չի հանդիսանում նախնական դատական վերահսկողության ոլորտ, հետևաբար դուրս է դատարանի իրավասությունից, օրինակ՝ բանկային գաղտնիքի դեպքում<sup>10</sup>:

Կարծում ենք քննարկվող դեպքում դատարանները իրավունք չունեն հեռախոսազանգերի վերծանում ստանալու թույլտվության վերաբերյալ միջնորդությունները քննելու կարգի բացակայության հիմքով հրաժարվել նման միջնորդությունները քննարկելուց: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի

<sup>10</sup> Այս մասին մանրամասն տես Ղանբարյան Ա., Մարանգուլյան Հ. Բանկային գաղտնիքը քրեական դատավարությունում (22.10.2004թ. դատական որոշման մեկնաբանություն): Օրենք և իրականություն, թիվ 10, 2005, էջեր 14-16:

համաձայն՝ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: ՀՀ Սահմանադրության 23 հոդվածի 5-րդ մասում ամրագրված հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքը անմիջական գործող նորմ է: Եթե վարույթն իրականացնող քննիչը, ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով սահմանված լիազորության հիման վրա պահանջում է հեռախոսազանգերի վերծանումները, ապա նա դատարանին պետք է ներկայացնի հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդություն: Ղատարանը նման միջնորդությունը պետք է քննարկի ՀՀ քր. դատ. օր.-ի 282-283 հոդվածներով սահմանված կարգով:

Միևնույն ժամանակ, իրավակիրառ պրակտիկայում սույն հարցի վերաբերյալ տարակարծությունները կանխելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր.-ում հստակորեն կարգավորել հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու նկատմամբ դատական վերահսկողության հետ կապված հարաբերությունները:

Այսպիսով կարելի է եզրակացնել՝

1. Հեռախոսային խոսակցության գաղտնիության իրավունքը իր սահմանադրաիրավական իմաստով, ընդգրկում է ոչ միայն բուն հեռախոսային խոսակցության բովանդակությունը, այլ նաև մուտք և ելք եղած հեռախոսազանգերի մասին տեղեկությունները:
2. Հեռախոսազանգերի վերծանումները կարելի է ստանալ դատարանի որոշմամբ:
3. Եթե կոնկրետ գործով քրեական հետապնդման մարմնի առջև դրված խնդիրն կարելի է լուծել միայն հեռախոսազանգերի մասին տվյալների սահմանափակմամբ, ապա խորհուրդ է տրվում չընտրել հեռախոսային խոսակցության բովանդակությունը լսելու եղանակով մարդու սահմանադրական իրավունքների առավել մեծ ծավալով սահմանափակող միջոցները /ՀՀ քր. դատ. օր.-ի 241 և 285 հոդվածներ/, այլ բավարարվել միայն դատարանի որոշմամբ հեռախոսազանգերի վերծանումները պահանջելով /ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ/:
4. Անձի հեռախոսազանգերի վերծանումները ստանալու դատարանի թույլտվությունը չի կարող կիրառվել տվյալ քրեական գործով անցնող այլ անձի հեռախոսազանգերի վերծանումները ստանալու համար:
5. Բաժանորդների վերաբերյալ կապի օպերատորի տիրապետած տեղեկությունները, որոնք չեն հանդիսանում հեռախոսային խոսակցության գաղտնիք, սակայն ընդգրկվում են էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիքի կազմում, ձեռք են բերվում ՀՀ քր. դատ. օր.-ի 172 հոդվածով սահմանված կարգով: